

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ՕՐԵՐՈՒՄ. *)

Հիշանելի պանդխտ-խիւն ալեւելահաւ:

Իսրայէլական կրօնի անխափան պահպանութեան արտաքին կարեւոր միջոցներից մեկն էր նորա աստուածապաշտութիւնը, որ կենդանացած և սահմանափակուած էր միայն Երուսաղէմի մէջ, Թէև Հին Ատակարանի ծէսերն ու արարողութիւնները սահմանափակ և բացառիկ են երևում, սակայն առանց այդպիսի նախասահմանեալ զգուշութեան դժուար էր միաստուածութեան գաղափարն անխափան պահպանել Երրայեցոց մէջ, Աշքի առաջ ունենալով հին աշխարհի գրութիւնը և Իսրայէլի ձգտումները՝ իւր պատմութեան նախկին ժամանակաշրջաններում, Հին Ատակարանի կրօնը օտար տարրների հետ խառնակուելուց ազատ պահելու համար կարեւոր էր որ նա անջատ մնար, որովհետև այդ տարրերը կարող էին նորա համար փտանգաւոր լինիլ: Այս դէպքում աւանդութիւնն էլ ուներ իւր նշանակութիւնն ու օգուտը:

Ուր էլ որ չուէր հոգմայեցին, յղին կամ Ասիոյ բնակիչը, նա այնտեղ կարող էր տանել իւր հետ իւր չաստուածները, ամեն ուրեք կարող էր գտնել այնպիսի ծէսեր, որ նմանութիւն ունենային իւր սեպհական ծէսերին, բայց հրէիկն այդպէս չէր: Նա ուներ միայն մի տաճար, որ գտնվում էր Երուսաղէմի մէջ, — միայն մի Աստուած, որ բազմեալ կայ ամօտի վերայ՝ քերով:

(*) Հերկայ յօդուածը, որ մինք քաղուած օրէն դուրս ենք բերել 1885 ամի Христиане Чтение „ 5-6, 7-8, 9-10 որդ համարներից, պատկանում է աստուածաժառանգութեան եւ փրկիստօյութեան դօկտոր Ալեքսէյ Էդրըշէյմի գրչին, որ ծննդէ ամբ հրէայ է, իսկ քրիստոնէութիւնը իւր չափաշատ ժամանակում ընդունած, բնագիրն անգլիարէն է, իսկ մինք քաղուածն արեւ ենք ռուսերէնից, որ այս խորագիրն է կրում. — „ Приготовление къ Евангелию: Иудейскій миръ во дни І. Христа „: Մենք մեր քաղուածի խորագիրը դրինք՝ „ Հրէական աշխարհը՝ Յիսուս Բրիստոսի օրերում „: Ա. Էդրըշէյմը հրէական ծագումն ունենալով կարողացել է քաջ ծանօթանալ Եբրայեցոց ընդարձակ աւանդական (տրագիցիօնալական) գրականութեան հետ եւ համեմատել այն Ս. Գրոց հետ եւ այդպիսով պարզել խոր հոգիական անհասկանալի ու մութ երեւոյթները, ինչպէս յիշեցինք, այս յօդուածը ոչ թէ բառացի թարգմանութիւն է, այլ քաղուած, որովհետեւ շատ պարբերութիւններ ու կտորներ, մինչեւ անգամ՝ ամբողջ գլուխներ բաց ենք թողել, — դր օրինակ փրկումը իւր Լօգոսով (Իան): Հելլենական աստուածաժառանգութեան ղարկացումը, ապօրինիները (թաղուցած, խորհրդաւոր դրօքը կամ այն գրքերը, որոնք հեղինակների անյայտութեան պատճառով Ս. Գրքի մէջ չեն ընդունուած), Արիստէյ, Արիստոքլաս, Գոլիոններ, (որոց մասին անցեալ տարի Արարտարի մէջ գրեց Հիմարանի նախկին ուսանող Պ. Ս. Գաբրիէլեանցը — Լոյսցիկից եւլոն եւլոն:

րէններով շրջապատած և մինչև ցայժմ թագաւորումէ Սիօնի վերայ, Այս տաճարն էր այն տեղին, ուր տիրասահման և անարատ քահանայութիւնը հաճելի զոհեր էր մատուցանում մարդկանց մեղքի թողութեան և Աստուծոյ հետ հաղորդութեան համար, Այստեղ՝ ներքնագոյն տաճարի անթափանցելի աղջամղջի մէջ՝ դրած էր տապանակը ժողովրդի առաջնորդը դէպի Աւետեաց երկիրը և այն պատուանդանը որի վերայ զկայ էր առեւ ռատուածութիւնը, Այդտեղ քահանայապետը տարին մի անգամ միայն կարող էր մտնել որ հանգիստաւոր կերպով թողութիւն հայցէ ժողովրդի համար, Այստեղ՝ ոսկեղէն սեղանի վերայից՝ կնդրկի բուրմունքն ու ինկոց ամպն էր բարձրանում—նշան Խորայէլի աղօթքի ընդունելութեան, Այստեղ եօթնջահեան աշտանակը սփռումէր ծաւլում անշլջանելի լոյս—վրկայ Աստուծոյ մեծ վայելչութեան և ներկայութեան, Արի հետ աղգը իւր ուխտն էր կապել, Այստեղ, իբր իսկ և իսկ առաջի Ահովայի իւրաքանչիւր եօթնեկում դրվումէր սեղանի վերայ առաջաւորութեան հացը («հաց դիմաց») մշտական նուիրեալ կերակուր որ Խորայէլն ընծայաբերումէր Աստուծոյ, և որով Աստուած սնուցանումէր իւր ընտրեալ քահանայութիւնը, Այստեղ՝ զոհի արիւնով, սրկած մեծ զոհից սեղանի վերայից բարձրանումէր հանապազօրեայ և տօնական ողջակիզի զոհերի ծուխը՝ զորս մատուցանումէր Խորայէլն աղգովին՝ ամեն մի իսրայէլագու համար, ուր էլ որ գրանուէր սա իսկ այդ ժամանակ տաճարի ընդարձակ սրահները լցուած էին ինում ոչ միայն Պաղեստինի տեղական բնակիչներով այլ ևս ներկից տակ գտնուող աղգերի մէջ տարածուած հրէաներով, Այս տաճարի շուրջն էին խմբուած անցիալի յիշատակները, նա և նորա հետ էին կապուած ապագայի փայլուն յոյսն ու ակնկալութիւնը, Բերայէլացոց պատմութիւնն ու բոլոր ակնկալութիւններն այնպէս սերտ հիւստած էին կրօնի հետ որ կարելի է ասել՝ արտաքոյ կրօնից նոքա չունէին պատմութիւն, և ընդհակադարձն, Եւ այսպէս պատմութիւնն ու հայրենասիրութիւնը կրօնն ու ակընկալութիւնը միահամուռ մատնացոյց էին լինում, Արուսաղէմի ու տաճարի վերայ թէ դոքա են Խորայէլի միութեան կենդրոնները:

Աղգի ճնշուած, ընկճուած դրութիւնը չը կարողացաւ երբեք փոխել նորա հայեցակէտը, չը կարողացաւ զրդել նորա անսասանելի հաւատը—Ի՞նչ նշանակութիւն ունէր Եղովմայեցի Հերովդիսի մինչև անգամ Գաւթի թիոդը գրաւելն իսկ, ո՞չ ապաքէն այն, որ դորանով նա ցոյց տուեց, թէ մեծ յանցանք է գործել, Խորայէլն անցել էր աւելի խոր ջրերից և յաղթանակով դուրս եկել ամիր, դարերով շարունակ մատնուած էին Եգիպտոսում ստրկութեան և գերութեան և այն՝ ըստ երևութին՝ անշոյս, այլ սակայն դիտելով իրանց պատճառով պատառուած և իրանց նեղիչներին հեղձամահ առնող ծովի վերայ, երգեցին յօրելեանի առաւօտեան օրհներգութիւնը, Նորից երկար տարիներ նոցա գերիչները կախ էին տալիս սիօնեան սաղմոսարանները քաղաքների գետերի մօտ և ստիպում էին, որ նոքա երգեն ու գովեն իրանց Սիօնն ու Արուսաղէմը, իսկ այդ թագաւորութիւնն էլ

Հող ու միսիր դարձաւ, և Իսրայէլը նոր ի նորոյ արմատ ձգեց և բողբոջ արձակեց: Ասորուց ողմից եղած խոշտանգանքն ու հալածանքը ամեն նեղութիւնից էլ վեր էին որովհետեւ նորա սպառնումէին նորա հաւատը բառնալ, բառնալ նոյն իսկ ազգութիւնը: Ասորուց թագաւոր Անտիոքոս Գ. Եպիփանը (Երեւելին) իւր համարձակ տխմարութեամբ արգելք դրեց նոցա կրօնի վերայ, ջանաց ոչնչացնել նոցա սուրբ գրքերը, անողորմ վայրագութեամբ ճնշում խոշտանգում էր նոցա հեթանոսական ծէսեր կատարելու համար, պղծեց տաճարը, նուիրելով նորան Ողիմպեայ Զևսին (Գիոսին, Արամազդին) և մինչև անգամ կռապաշտական սեղան կանգնեց ողջակիզի սեղանի վերայ: Եւ պատուէր ետ քաղաքացն Հրէաստանի մատուցանել զոչս քաղաքի քաղաքի, եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն, որ աղստամբ լեալ էր յօրինաց անտի և լցին չարեօք զերկիրն, և արարին ամբախտ զԻսրայէլ յամենայն տեղիս ամբութեան ապաստանաց նոցա: Յամին հարիւրերորդի քառասներորդի հինգերորդի, ամսեանն որ օր քսան և հինգ էր ամսոյն, շինեաց նա պատկեր պղծութեան անապատի ի վերայ սեղանոյն. ընդ ամենայն Հրէաստան շուրջ զքաղաքօք շինեցին մեհեանս և ի վերայ ամենայն դրանց ապարանիցն և ընդ ամենայն գնացս քաղաքացն՝ խոնկս արկանէին: Եւ զգիրս ամենայն կտակարանացն, զոր գտանէին, պատահէին և հուրք կիզուին: Եւ ուր առ ումեք գտանէին գիրք կտակարանաց, կամ թէ ոք ուրեք ընդ օրէնս հաւատարէր, հրաման թագաւորին զնա մահու սպանանէր *): Բայց ամենից վատն այն էր, որ նորա պիղծ խորհուրդներն առաջ տանելուն օգնումէին ուրացող քահանայապետներ, որ մէկը դերազանցում էր քան զմիւսը իւր ստացած կաշառներով: Յասոն անուն ոմն՝ եղբայր Յոնեայ (III ի), ջանացաւ շնութեամբ մտանել հանել զքահանայապետութիւնն Յոնեայ, խոստացաւ տալ յսրբունիս վաթսուն քանքար, և այլ ևս հարիւր ևս մատուցից՝ ասէ, եթէ գործն յաջողեցի, զքաղաքն ի ձեզ նուաճեցից, թէատրոնս և կրկէսս շինեցից, ասէր, և Երուսաղէմացւոյն ի ձեր անուն Անտիոքացիս կրեցից, Իբրեւ յանձն առ թագաւորն, եգիտ նա զիշխանութիւնն, զոր խնդրէր՝ հետ ընդ հետ վաղվաղակի ի Յունաց ի հեթանոսութիւն անդր զյնտանի օրէնսն դարձուցանէր, Զպարգեան զառաջինն զարքունի, որ ի ձեռն Յովհաննու և Փաղողմնայ հօր ի ժամանակի հրեշտակութեանն՝ որ վառն հասարակաց սիրով օգնականութեան կատարեցան և զկրօնն օրինաւորս ի բաց քակեցին, և անօրէնութեան նոր օրէնք ի ներքս արկանէր, Զի ի ներքս ընդ բերդաւն իսկ թէատրոնս և երկտասարդանոցս շինէր, ժիրաժիր մանկունս ընտրանաւ զայն յուսումն արուեստականացն տային: Եւ այնպէս իմն եռանդն ածէին, սկիզբն արարեալ այլազգութեանն և հեթանոսութեանն վասն ամբարիշտ և չքահանայապետ Յասոնեայ անհնարին մոլորութեանն, Զի այնուհետեւ թողեալ էր զպաշտօն պատարագաց սեղանոյն և զսպասս տաճարին և արհա-

(*) Ա. Մակաբայեց. գլ. II. 54-60.

մարհեալ էր զողջակէզս պատարագսն. յօժարագոյնս տային զանձինս իւրեանց ազգք քահանայիցն ի մարդիչս (ի մարդիկս) և ի ընտանարտիկս և յանօրէնս բաշխոյս կարաւաջ և արդենկէց տէգրենկէց ձայնատու ժամանակուն (տէգ, միբախ խաղցնել). Առ զհայրենի պատին առ ոչինչ համարէին. բայց զանօրէն հեթանոսութեան փառս քան զօրհնութեան փառս լաւ համարէին. . . . Ապա յետ երից ամաց ժամանակի արձակեաց Յասոն զՄենեղաւս զեղբայր մոլեկան Սիմոնի, ի ձեռն ետ նմա տանել առ արքայ զգանձն զարքունի, նա՝ իրրե յանդիման եղև արքային և մեծարեցաւ ի նմանէ, յանձն իւր սկսաւ կորզել զքահանայութիւնն և զյանցանել զՅասոնեա՝ յաւել ևս ի սալ գանձին այլ ևս երեք հարիւր քանքոր, և առեալ զայր զհրաման իշխանութեանն զարքունի. . . . *), Բայց սորան էլ չը նայէր ի Եփրայիմի հեռաւոր լեռներում Աստուած նորանց համար փառաւոր յաղթանակ էր պատրաստել. Այդպիսի փառաւոր յաղթանակներէն յետոյ որ կատարուէր անուս մարդկանց ձեռքով ասորական զօրքի զօրպանակի հետ կռուելիս, Յուդա Մակարէն, որին արդարեւ վայել էր աստուածային մութ՝ անունը տալ տաճարը մարքեզ և նորս սեղանները կանգնեց նոյն իսկ այն օրը, երբ թշնամիք լցին «չարիօք զերկիր» : Նոցա՝ ամբողջ պատմութեան մէջ տեսնուանք, որ ամենախաւար զիշերային ժամերը կարապետ էին հանգիստանում առաւօտեան արշալուսին, որովհետեւ նոցա լուր մարգարէները միաձայն համոզումէին նոցա սպասել և յուսալ. Անցեալի վերաբերութեամբ նոցա կանխասացութիւնները կատարուել էին, մի՞թէ նոքա իրականութիւն չը պէտք է ստանային Սիօնի և Բսրայէլի առաւել փառաւոր ապագայի վերաբերութեամբ, որ կատարուելու էր Մեսիայի գալստեամբ:

Միայն Պաղեստինի հրէաները չէին, որ այդպէս էին զգում, և որոնք այդ ժամանակ ազգի փոքրամասնութիւնն էին կազմում. ազգի մեծամասնութիւնը կազմումէին «նժդիհները», պանդուխտները. Այս բառը կորցրել է իւր նախկին նշանակութիւնը, — այն է՝ գերութիւն ըստ արգարագատութեան Աստուծոյ որովհետեւ Պաղեստինից մեկնելն այժմ յօժարակամ բան էր դարձել. Ըստ Յովսէփոսի «չըկար ազգ աշխարհիս երեսին, որի մէջ տարածուած չըլինէր Յուդայի ազգի մի մասը», և լմէ և նա շատ էր տարածուել ու սփռուել աշխարհի վերայ», այնուամենայնիւ նա ո՛չ մի տեղ չէր գտնում իւր իսկական «Հայրենիքը» : Մեր դարազլխից (էրա) դարուկէս ասած՝ Եզրիպտոսից, ուր հրէաներն առանձնաշնորհութիւններ էին ստացել այդ ժամանակ, երբայական պատգամախօսի հետեւալ լացն ու կոծն է լսում. — «Լցնելով թղթ որկրանոսներն ու երկրները, դու քո ներկայութեամբ ու սովորութեամբ անպատուութիւն ևս բերում քո շուրջը բնակողների վերայ» : Եօթանասուն տարի յետոյ յոյն աշխարհագիր և պատմաբան Ստրաբոնը միևնոյնն է վկայում նոցա ամենայն տեղ սփռուած

(*) Մակար. 41. Գ.

լինելու համար և խօսումէ այնպիսի լեզուով, որ ցոյց է տալիս թէ ո՛րքան իրաւացի էր պատգամախօսի գանգաւը: Փիլոնը հարեանցի կերպով ցոյց է տալի Իսրայէլի անխտանակ կեցութեան պատճառը հեթանոս աշխարհում: Երբ խօսելով իւր հայրենակիցների վերայ, որ բնակվումէին «Աւրոպայի ամեն քաղաքներում նահանգներում ու կղզիներում», ասումէ թէ՛ նորա ուր էլ որ գնացին, ունէին մի մայր քաղաք միայն, և այն էլ ո՛չ թէ Ալէքսանդրիան, Անտիոքը կամ Հռոմն էր, այլ «սուրբ քաղաքը իւր տաճարով, որ նուիրած էր Բարձրելոյն Աստուծոյ»: Նորա սիրտը բարակումէր միայն Արուսաղէմում և այնտեղից էր հոսում կենսատու արիւն նորա ամենահեռաւոր անդամներին կեանք տալու համար:

Բոլոր վերեն ասածները կարելի է ընդունել աւելի արեւմտեան, քան արեւելեան նմոյս հոգեւորական վերաբերութեամբ: Աւրջինա Պաղեստինի հետ սերտ յարաբերութիւն ունէր: Յիշատակաց արժանի գատկական տօնի ժամանակ Արուսաղէմի մէջ կայացած ժողովի մասին եղած աւետարանական պատմութեան մէջ պանդուխտները (ըստ երեւութին) երկու մեծ բաժինների են վերածած, — արեւելեան կամ անդրեփրատեան և արեւմտեան կամ հելլենական: Առաջինին պատկանումէին «Պարթևք և Մարք, և Նիւմացիք և որ բնակեալ են ի Միջագետս, հրէաները միջին տեղն էին բռնել, իսկ կրիտացիք և արարացիք»: Ներկայացնումէին հեռաւորագոյն բնակիչները, Արեւմտեանները Պաղեստինի մէջ յայտնի էին սոփորական անուամբ «սփիւռք ի մէջ հեթանոսաց»: Հելլեններ կամ յոյներ, Անդեփրատեան հրէաները, որ բնակվումէին Բարելոնում և այլ շատ սատրապներում (հին Պարսկաստանի նահանգներում), հաշուումէին Պաղեստինի և Ասորիքի բնակիչների շարքում և կոչվումէին ընդհանուր անուամբ «Հրէայ», որովհետեւ մի ընդհանուր լեզուով էին խօսում:

Հելլենականների (հեթանոս հոգեմայեցիների մէջ սփռուածների) և հրէաների մէջ մեծ դանազանութիւն կար, և այդ լեզուի տարբերութեան մէջ չէր կայանում միայն, այլ վերաբերումէր նոցա մտքի ուղղութեանը: Յունաց աշխարհում մտաւոր ազդեցութիւնը ցոյց էր տալիս ամեն բանի մէջ, որից չէին կարող խոյս տալ հրէաները: Սակայն բնական է, որ հելլենականները, որ ընկած էին այդպիսի թշնամի տարրերի մէջ, պէտք է ցանկային իրանց արեւելեան եղբայրների հետ հրէանալ, Փարիսեցութիւնը, որ պարծենումէր իւր օրինականութեամբ, սրբութեամբ, աւանդութեանց պիտութեամբ և ծանօթութեամբ, իւր արհամարհանքը չէր ծածկում դեպի հելլենականները և բացարձակ կերպով ստոր էր դասում Եղյներին բարեւոյնական «պանդուխտներից»: Այդ զգացմունքը խոր արմատ էր ձգել ժողովրդի հոգու մէջ, որի համար կարելի է առաջ բերել այն փաստը, որ առաքելական եկեղեցում՝ նորա գոյութեան առաջին օրերում՝ հելլենականների (Եղյների) և եբրայեցիների մէջ վեճեր էին բարձրանում: (Գործք. 2. 1.)

Յագայի առաջնորդները Բարելոնի նմոյս հրէաների մասին բոլորովին այլ

կարծիք ունեին: Բարեկաստանն ու Ասորիքը դէպի Հիւսիս մինչև Անտիոք համարվումէին Խորայեւոցուց երկրի բաղադրիչ մասը: Միայն Բարեկաստանն էր, որ Պաղեստինի մասն էր համարվում իսկ «երկրի» վերաբերումներում (ինչպէս նոքա անուանումէին Պաղեստինը) բոլոր կողմերը սահմանից դուրս էին համարվում: Որովհետև այն ժամանակ կարծումէին, թէ Ասորիքն ու Միջագետքը Տիգրիսի փերից դէպի արևելք մտնումէին Դաւթի նուաճած երկրների սահմանը, վասնորոյ դոքա հրէաների գաղափարով միշտ «խրայեւական» երկիր էին համարվում: Եւ իրգը Եփրատի ու Տիգրիսի հովիտներում այնքան բազմաթիւ և հարուստ հրէաների գաղթական նույնիսկներ կային, որ վերջին ժամանակների մի մատենագիր այդ տեղերը Խորայեւացիների երկիր է անուանում: Արքայական ջրանցի վերայ շինուած էր մի քաղաք, որ հրէական ամենահին գաղթականների է համարվում: Այդ ջրանցքն անցնումէր Եփրատից մինչև Տիգրիս: Եւստ էր գոյնուած նորա ժողովարանը, որը, որպէս թէ՛ շինել էր տուել Յոնիա թագաւորը տաճարից բերել տուած քարերով: Արևելեան հրէաներն այս ամրաշէն քաղաքի մէջ էին հաւաքում Տաճարի համար հանգանակուած ահագին գումարները և այդտեղից ուղարկվում էին այդ նուէրները նշանակեալ տեղը՝ շրջապատած մի քանի հազար զինուորներով: Մի ուրիշ գանձարան—քաղաք էլ կար Նեբուչէ-անունով, որ Հիւսիսային Միջագետքումն էր: Միայն այս փաստը բաւ է, որ ցոյց տայ թէ ժողովրդական ամրաշէնը էր այս տեղի գաղթականութիւնը, որ կարող էր հեծանքների ագահութիւնը զրոյցը այդ ահագին գումարները ժողովել և ապահով կերպով Պաղեստին ուղարկել:

Եփրատի արևելեան պանդխտութեան մասին, չատ կարևոր է ի յուշածել այն հանգամանքը, որ Բարեկոնից նախ Զօրաբարելի և ապա Եզրի ժամանակ (536 Ն. Ք.) վերագարձան հրէաների փոքրամասնութիւնը մի այն, այն է 60,000 հոգի. սակայն աւելի հարուստ և ազդեցիկ հրէաները Բարեկոնում մնացին: Յովսէփոսին նայելով, որին համաձայն է և ակա նաւոր Փիլոնը, անդրեփրատեան նահանգների մէջ բնակուող հրէաների թիւը միլիոնների էր հասնում: Եթէ ժողովրդական ապստամբութեանց ժամանակ եղած կոտորածներին նայենք, այն ժամանակ այս թիւը չափազանց մեծացրած չի երևիլ մեր աչքին: (Միայն Սելևկիայում 50,000 հոգի ջարդուեցան): Համաձայն հին աւանդութեան, հրէական ազգաբնակչութիւնը պարսկական տէրութեան մէջ իրր այնքան մեծ էր, որ Յիւրոսը երկիւղ էր կրում, թէ մի՞ գուցէ պանդխտների հայրենիք դառնալու պատճառով իւր երկիրն ամայանայ, վասնորոյ արգելեց նոցա վերջին վերագարձը: Այդ մեծ ու հոծ հասարակութիւնը շուտով կարող էր քաղաքական ոյժ դառնալ: Պարսկական թագաւորների ժամանակ հեղութեամբ խոնարհութեամբ կառավարուող հրէաները՝ Պարսկաստանի անկումից յետոյ (330 թ. Ն. Ք. Ք. վայելումէին Աղէքսանդրի յաջորդների հովանաւորութիւնը: Երբ Մակեդոնա-Ասորական իշխանութիւնը տեղի տուեց Պարթևների պիտու-

Թեանը (63 թ. ն. Բ.), հրեաները դէպի Հռոմէն ունեցած ազգային ընդդիմադրութեան պատճառով անհամեմատ բարձր նշանակութիւն ունեցան արեւելքում։ Քրիստոսի ծննդից 40 տարի յետոյ նոքա այնքան մեծ ազդեցութիւն ու նշանակութիւն էին ստացել, որ հռոմէական լեզունները երկիւղ էին կրում նոցա թշնամութիւնը գրգռելուց։ Բայց չի կարելի անուշադիր լինել դէպի այն հանգամանքը որ այս հովանաւորեալ նահանգներում անգամ նոքա բողոքովին ազատ չէին հալածանքից։ Պատմութեան ժամանակագրութիւնները շատ անգամ ծանուցանում են մեզ թէ այն մարդիկ որոնց մէջ բնակվում էին հրեաները, յաճախ արիւնալից շփոթներ ու ու խռովութիւններ էին յարուցանում նոցա դէմ։

Մակեդոնեան—Լսորական ինքնակալութեան ժամանակ արեւելեան և ասորական եղբայրները Պաղեստինի բնակիչների համար «պանդուխտներ» էին համարվում։ Նրուսադէմի ծերակոյտը (սինեդրիոն) հրեղէն նշաններով մի լերան բարձրութիւնից հաղորդում էր միւսին ամեն ամսի սկիզբը—տօնական օրացոյցը կանոնաւոր պահպանելու համար։ Վերջերում այդ նպատակով համբաւաբերներ էր ուղարկում Լսորիք։ Մի քանի յայտնի դէպքերում արեւելեան գաղթականութիւնը մի և նոյն պայմանների մէջ էր գտնվում։ Իսկ մի քանի բաներում նա համեմատաբար բարձր դիրք ունէր, քան նոյն իսկ հայրենի երկիրը։ Հեթանոս երկրների փոշին անգամ պիղծ էին համարում։ Բայց Լսորիքի հողն այնքան մաքուր ու սուրբ էր ճանաչուած, որքան նոյն իսկ Պաղեստինի հողը։

Ինչ որ վերաբերում է ժառանգականութեան անտիեղծ անարատութեանը, այդ բանի մէջ Բաբելացիներն իրանց աւելի բարձր էին համարում։ Քան իրանց Պաղեստինի եղբայրներին։ Նոքա պնդումէին թէ Նզրասն իւր հետ տանելով Պաղեստին գնացողներին իրանից յետոյ երկիրը թողեց մաքուր ու նուրբ, որպէս ալիւր։ Նոցա կարծեքով՝ հրեաների տոհմաբանական անարատութեան վերաբերութեամբ բոլոր միւս երկրները Պաղեստինի հետ համեմատելով նման էին խմորուած զանգուածի իսկ ինչ որ վերաբերում է Պաղեստինին՝ նա միայն կարող էր հաւասարիլ Բաբելաստանին։ Նոքա հաւատացնում էին (չափազանցելով ի հարկէ), որ եթէ բոլոր տոհմաբանական տրձանագրութիւններն ու հետազօտութիւններն ի մի հաւաքուէին, մի քանի հարիւր ուղտի բռն կը լինէին։ Լրիւ ու ճիշտ աղիւսակներ պահելու համար շատ հոգացողութիւն ու ջանք էին գործ դնում և այն էլ միայն նորա համար որ ծագման անարատութիւնը կարգին պահուի։ Թէ ի՞նչ կարևորութիւն էին տալիս այդ աղիւսակներին, այդ մենք կարող ենք իմանալ Նզրասի գործողութիւնից։ Յովսէփոս ևս մեծ նշանակութիւն էր տալիս այդ բանին։ Ինչ որ վերաբերում է քահանայութեան ծագման պաշտօնական արձանագրութեանց, նոքա պահվում էին տաճարի մէջ։ Բացի դորանից հրեական իշխանութիւններն իրանց ձեռքի տակ ունէին ընդհանուր պաշտօնական արձանագրութիւն, որը յետոյ Հերովլէս հրամայեց այրել որի պատճառը հասկանալի է։ Իսկ այդ օրից սկսած, ինչպէս ողբում է մի բարբի,

հրէաների փառքը նսեմացաւ:

Սակայն արեւելեան գաղթականութիւնը միայն ծագման անարատութեամբ չէր որ կարող էր պարծենալ: Նոցա կարծիքով Պաղեստինի բնակիչները շատ բաներում պարտական էին Աղրասին, այն ականաւոր Բարեկացուն որ լատ աւանդութեան կարող էր ազդին օրէնք տալ և թէ այդ փառքը նստանից առաջ Մովսիսին չը վիճակուէր: Մի կողմ թողնելով զանազան բերանացի աւանդական հրամաններ որոնք Թալմուդը վերագրումէ նորան, մենք նորա արածների հետ բաականին լաւ ծանօթանումենք Ս. Գրքի միջոցաւ: (Աւանդութեան համաձայն Աղրասը վերագրձաւ Բարելուն և այնտեղ մտաւ: Իսկ Յոսէփոսն ասումէ թէ նա մեռել է Արուսաղէմում):— Կերպարանափոխուած հանգամանքները նշանաւոր փոփոխութիւն յառաջացրին որ յուրապահան տէրութեան մէջ: Մինչև իսկ խօսակցական և գրականական լեզուն նոյնը չէր ինչ որ առաջ: Էին ժամանակներում գործածուող գրութեան փոխանակ գաղթականները վերագրածալու ժամանակ իրանց հետ բերին այսպէս անուանեալ երբայական քառակուսի տառերը, որոնք հետզհետէ ընդհանուր գործածութիւն ստացան և ներկայումս հասարակաց են եղած *): Այն լեզուն, որով խօսում էին հրէաները թէ Պաղեստինում և թէ Բարեկացտանում **): արդէն ո՛չ թէ երբայական այլ արամէական էր: Պաղեստինում արեւմտեան բարբառն էր գործածվում, իսկ Բարեկացտանում արեւելեանը: Երգարեւ հասարակ ժողովուրդը չը գիտէր մարութ, երբայական լեզուն որ այս ժամանակից սկսած արդէն գիտնական և ձերականտական լեզու էր դարձել: Մինչև անգամ կարիք էր զգացվում մեկնիչներ նշանակել, որ հասարակաց աստուածապաշտութեան ժամանակ Ս. Գրքի հատուածներն ու բարբառների քարոզները ժողովրդին թարգմա-

(*) Թէեւ նոցա Եզրի ժամանակ մուտ գործեցին, բայց հին եբրայական նշանագրերը, որ նման էին Ամսորականին, տակաւ առ տակաւ տեղի տուին նոցա: Նոցա կարելի է գտնել յիշատակարանների եւ դրամների վերայ:

(**) Հերցֆելդը Պաղեստինի բնակիչների լեզուն նկարագրելիս ցոյց է տալիս, թէ նա երբայական դպն ունենալու պատճառով կարող է եբրայական—արամէական լեզու ճանաչուիլ: Եբրայական եւ արամէական լեզուները պատկանում են լեզուների ընտանիքին— որ տրոհվումէ այս կերպ:— 1). Հեւսիսային սեմականներ սոււնա—փիւնիկական, եբրայական եւ արամէական (արեւմտեան եւ արեւելեան բաղաձայններ: 2). Հարաւային սեմականներ՝ արաբական եւ հիթիտական: 3). Արեւելեան սեմականներ՝ ասորա—բաբելական սեպագիր: Խօսելով Պաղեստինում գործածուող բարբառի վերայ, ի հարկէ չի կարելի մոռանալ Ասորիքի ահագին ազդեցութիւնը, որ երեւումէր ինչպէս գաղթականութեանց առաջ, նոյնպէս եւ յետոյ: Այս երեք ճիւղերից արամէականը միւսներից աւելի սերտ կապ ունի եբրայականի հետ: Եբրայականը արամէականի եւ արաբականի միջին տեղն է բռնում եւ գրականական տեսակէտից ամենահինը կարելի է անուանել: Կոր բարբառի Պաղեստին ներածելու հետ միասին յայտնվում են նոր քառակուսի նշանագրերը: Մինչև եւ նորան ցեղակից բոլոր գրականութիւնը մինչև Գ. դարը գրուած է եբրայական կամ որ աւելի հաւանական է ասել նորա նոր զարգացման լեզուով: Թ ու մուղը գրուած է արամէական լեզուով:

նէին: Ճշմարիտ է, սկզբում թարգմանչին արգելուած էր իւր թարգմանութիւնը կարդալ կամ իւր թարգմանածը օրագրել, որովհետեւ երկիւղ էին կրում: Թէ չըլինի՞ թարգմանութեանն ու բացատրութեանը մի և նոյն նշանակութիւնը տան, ինչ որ սկզբնադրին: Մինչև անգամ հաստատուեալն, թէ երբ որ Յովնաթան իր մեկնութիւնը գրեց մարգարէների վերայ, երկրնքից ձայն եկաւ, որ ասումէր. — Ո՞վ է նա, որ իմ գաղտնիքը յայտնումէ մարդկանց: Այնու ամենայնիւ պղպիսի մեկնութիւններ գոյութիւն ունէին ի վաղուց հետէ և նոցա գործածութիւնը թոյլտուութիւն էր ստացել իշխանութեան կողմից մինչև Քրիստոսի ծննդեան Բ. դարու վերջը: Մեր ձեռքն հասած ամենահին մեկնութեանց երկուսից մէկը գրուած է Հնգամատենի վերաբերութեամբ, իսկ միւսը մարգարէների վերաբերութեամբ և վերագրումն Յովնաթանին: Այս աշխատութիւնները թէև սկզբում Պաղեստինում կատարուեցան, սակայն այն ձևը, որով նոքա մեր ձեռքն են հասած ներկայումս, ցոյց է տալիս, որ նոքա պէտքէ դուրս եկած լինին Բաբելոնի դպրոցներից, նոր հանգամանքները, որոնց մէջ գտնվումէին հրէաները իւրեանց վերադարձի ժամանակ, յառաջացրին եթէ ոչ նոր օրէնսդրութիւն, գոնէ Մովսէսականին մի կերպ յարմարեցրած օրէնք: Բարեպաշտութիւնն ու կրօնական եռանդն այժմ ուղղուած էր դէպի արտաքին ձեւերն ու օրինաց տառի ուսումնասիրութիւնը: Այս հանգամանքի ծնունդն է համարվում Միշնան կամ երկրորդ օրէնքը, որի նպատակն է առաջինի ուսումնասիրութիւնն ու լրութիւնը *), Նա կազմումէր հրէից կրօնի ամբողջ վարդապետութիւնը, որի ուսումնասիրութեամբ զրաղուած էին իմաստուններ, բարբուխներ, ուսումնականներ, դպիրներ և քարոզիչներ, Նորա ազգեցութեան հետեանքն է Միդրաշը (ըննութիւն), մի ասացուած, որ յե-

(*) Միշնան (երկրորդումն՝ թալմուդի մի մասն է, թալմուդ բառը եբրայերէն թամագ բառից է ածանցուել եւ նշանակումէ ուսումն, թալմուդն է մի գիրք, որ կազմել են հրէսց աւաքներն իբր լրութիւն Ս. Գրքի եւ բովանդակումէ իւր մէջ զանազան խրատներ, խրիւ տեսակ թալմուդ կոչ — մէկն է Երուսաղէմականը, որ գործածութեան մէջ չէ եւ միւսն Բաբելոնականը, որ բաժանվումէ երկու մասի. Ա. մասն անուանվումէ Միշնա, Բ. մասը Գեմարա, Միշնան գրուած է Քրիստոսի 180 թուին Յուդայի ձեռքով՝ եբրայեցաց մարտը լեզուով. Գեմարան գրուած է զանազան ազգերի խառն լեզուներով, այն է՝ եբրայական, քաղղէական, ասորական, հին յունական եւ հուովմէական լեզուներով, գորա համար էլ դժուար հասկանալի է եբրայական լեզուի մասնագէտներին տնգամ, Գեմարան Միշնայի եւ Ս. Գրքի վախճանական մեկնութիւնն ու բացատրութիւնն է, Երկու տեսակ Գեմարա կոչ մէկն է Երուսաղէմի ուսումնականների եւ օրինականների կազմած մեկնութիւնը միւսն է Բաբելոնացիներիը, Երուսաղէմականը գրուած է 473 ին, Երուսաղէմայի Ռաբի Եփրայիմի ձեռքով, իսկ Բաբելոնականը 573 ին Ռաբինէ եւ Ռաֆաէլ Կարբիների ձեռքով, Այս թուերի եւ պ. Ս. Տէր Գարբիէլեանցի յօդուածում յիշուած թուերի մէջ տարբերութիւն կայ, Տես Արարատ 1885 թ. երես 22 եւ Живович, Обзорев. 1874 թ. "Человек", յօդուածի մէջ:

տոյ սովորաբար տրվումէր Ս. Գրքի բացատրութիւններին և յորդորակներին։ Բոլոր ասածներէց յետոյ հարկ չը կայ հարցնել, թէ գաղթականների Բարեւոյնից վերադառնալուց յետոյ՝ առաջին դարում կային արդեօք կանոնաւոր աստուածաբանական ակադեմիաներ նոյն իսկ Բարեւոյնում։ Թէ և շատ դժուար է սորա համար պատմական փաստեր բերելը։ Սակայն հազիւ թէ կարելի լինի կասկածանք յայտնել, թէ երրոյական համայնքը, որ ոյնքան մեծ և գործունեայ էր, կարողանար անտարբեր գտնուել դէպի ուսումը, այն համայնքը, որ իւր վերայ էր կենդրոնացրել Պաղեստինում եղած իւր եղբայրների միտքն ու ակնկալութիւնը։ Հիլլէլն ինքը երբ դեռ աղքատ անոթ, անյայտ աշակերտ էր, ստիպուած էր ուղևորուիլ այնտեղ հեղինակութիւն, ուսումն ու գիտութիւն ստանալու, որոնց նա այն ժամանակ իւր սեպհական երկրում չէր կարող գտնել։ Այս հանգամանքն ինքն ըստ ինքեան մտածել է տալիս թէ ուսումը գտնէ քաջալերութիւն էր գտնում Բարեւաստանում։ Գորանից յետոյ Բարեւոյնական դպրոցներն արագ-արագ բարձրացան և նսեմացրին Պաղեստինի դպրոցների շուրջ։

Պաղեստինի ընակիչները որքան էլ որ իրոխտանային Բարեւոյնականների վերայ, որքան էլ որ ասէին, թէ նոքա յիմար են և թշուառ (ուսումն միայն չորարեկ հաց)։ Սակայն ինքեանք պէտքէ խոստովանէին և չուրանային այն փաստը, որ երբ օրէնք անկան իմուացօնս, նոցա վերականգնողը Բարեւոյնացի եղբայրն էր։ Երբ նա երկրորդ անգամ մուացութեան մասնուեց, Բարեւոյնացի Հիլլէլն եկաւ և նորից սովորեցրուց, և երբ, չը նայելով այդ լանին, նա երրորդ անգամ մուացութեան մէջ ընկաւ, այն ուարրին, որ օրէնքը նորից նոցա յանձնեց գործնել Բարեւոյնացի էր։

Այսպէս էր երրոյական այն պանդխտութիւնը, որ նոյն իսկ սկզբից կազմումէր Յուդայի ազգի գլխաւոր մասն ու ղյծը և որի մէջ պահուած էր նորա բոլոր կրօնական ապագան։ Այս պանդխտութիւնը պէտք է դասել պատմական մեծ կարևորութիւն ունեցող փաստերի հետ, որովհետեւ Արուսազէմի աւերմունքից յետոյ Պաղեստինի հոգևոր գերիշխանութիւնն անցնումէ Բարեւաստան և որովհետեւ բարբառական հրէութիւնը քաղաքական միջոցների ու տաղանապի ժամանակ ինքնայօժար կամք տեղափոխումէ դէպի իսրայէլական հին պանդխտութեան տեղը։ Բայց բարեւոյնական պանդխտութիւնն իւր թեւերը տարածել էր ամեն կողմ, այդ ժամանակից դեռ շատ առաջ Հայաստանի վերայով նա հասել էր Սոփիական ու Սեփիական փերին, իսկ Մարաց երկրի վերայով—Ասսպիականի փերին։ Դէպի հարաւ նա տարածուել էր մինչև Պարսկական ծոցը և Արաբիոյ ամբողջ տարածութեան վերայ թէև երջանիկ Արաբիան և հոմերիաների երկիրը կարող էին իրանց առաջին հրէական գաղթականներն ընդունած լինել Նիմեովպիոյ հակադիր եղբայրներից։ Դէպի արեւելք նա գնացել հասել էր մինչև Հնդկաստան։ Ամեն տեղ մեծ վկայութիւններ ենք գտնում այս պանդխտների վերաբերութեամբ և ամենայն տեղ, ուր էլ որ գնացել են նոքա, ամենատարտ յարաբերութիւն են պահել Պաղեստինի բարբառական քահանայապետու-

Թեան հետ—Բարեշնացիները հարստութիւնն ու ազդեցութիւնը վաճառականութեամբ էին ձեռք բերում, թէեւ չէին սրհամարհում և երկրագործութիւնը։ Նոցա կարաւաններն արեւելքից արեւմուտք էին փոխադրում թանկագին գորգեր և անկուածներ ինչպէս և գնոց համեմունք, որոնք Պաղեստինից սովորաբար անցնումէին դէպի Փիւնիկեցւոց նաւահանգիստները, ուր պատրաստի կանգնած էր հրէայ գրամատերներին պատկանեալ վաճառականական նաւերի ամբողջ տորմիդ, որի գործն էր տանել սփռել այդ առարկաները աշխարհիս ամեն մասում։ Այս վաճառաշահ իշխանները շատ զգայուն էին դէպի այն ամենը, ինչ որ կատարվումէր գրամական և քաղաքական աշխարհում։ Մենք գիտենք, որ նոցա ձեռին էր տէրութեան գաղտնիքները և նոցա էր յանձնվում գիւանական գործերը։ Միայն ու թընօրեայ ուղին էր, որ նոցա բաժանումէր Պաղեստինից, իսկ այս վերջինի շնչերակի ծայրը, ինչպէս նկատումէ Փիլոնը, վերջանումէր Բարելաստանում։ Այս գաղթականութեան ամենահեռաւոր մասում Արարիկը ընդարձակ հարթավայրերում Սօղոս Տարսնացին անցկացրեց ամբողջ երեք տարի լուռ մտախոհութեանց մէջ, որոնք կարապետ եղան նորա երկրորդ անգամ Նրուսադէմ դալուն, ուր իւր եղբայրակիցների շրջանում գործելու բուն ցանկութեամբ ու եռանդով առաջնորդուած և երկար ժամանակ այս հրէաների մէջ մնալով, բորբոքուած, այրուած, և նոյն իսկ հրէաներից զրդուած, դիմեց այն հրաշալի գործին, որ եղաւ նորա կեանքի կոչումը և խորհուրդը։ Այդ մի և նոյն հասարակութեան մէջ գրեց ու աշխատեց Պետրոսը և այն՝ խիստ անյաջող պայմաններում *), որոց մասին եթէ կամենումենք հասկացողութիւն կազմել, բաւական է որ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս այդ հասարակութիւնը դեռ Գ. դարու վերջերում պարծնումէր, թէ իւր մէջ քրիստոնէական կրօնը գաւանող ո՛չ մի հրէայ չի կարելի գտնել։

Այս գրուածները չեն վերաբերում տասն ցեղերի այն պանդուխտներին, որոնց ճանապարհորդութիւնը հետքեր չէ թողել և որոնց թափառական կեանքն այնքան խորհրդաւոր, ծածկուած և մթին է մնացել, որքան նոցա համար պատրաստուած վիճակը, Թալմուդականները չորս տեղ են ցոյց տալիս. ուր նոքա կարող էին գաղթականութիւն հաստատել։ Սակայն մենք եթէ նոցա մութ ու անորոշ խօսքերին հաւատ էլ ընծայենք այնուամենայնիւ չենք կարող այս երկրներից գոնէ երկուսի տեղը լիակատար ճշտութեամբ որոշել։ Ինչ որ այժմ նոցա մասին յայտնի է միայն այս բանն է ցոյց տալիս, թէ նոցա գաղթականութեան ճանապարհը ուղղուած է եղել դէպի հիւսիս Հնդկաստանի, Հայաստանի, Մարաց լեռների և Պակասդի վերայով, Յովսէփոսն ասումէ, թէ նոքա շատ բազմութիւն էին և բնակվումէին Նփրատի միւս կողմերում, Միշնան լուութեան է տալիս և ոչինչ չի ասում նոցա բնակութեան տեղի մասին, միայն դատողութիւններ է յայտնում ապագայում նոցա վերադառնալու մասին։

(*) Գաղ Լ. 17 և Պետր 13

Տասն ցեղերի վերաբերութեամբ կայ հետեւեալ հաստատութեան կարօտ վարկածը (հիպօթեզա) թէ որովհետեւ նորա յամառութեամբ հեռացան Իսրայէլի Աստուծուց և աստուածպաշտութիւնից, վասնորոյ իսպառ բաժանուցին Նորա ժողովրդից, ուրեմն նորից Իսրայէլացի զառնալու համար նորա պէտք է վերածնէին ի վերջին աւուրս: Նորագոյն հետազօտութիւնները ցոյց են տալիս, թէ նետտրականները պէտք է առաջացած լինին (գուցէ) անհետացած երրայական ցեղերից, այդ միւսնոյն կարծիքը կայ և և Աւղանցիների մասին. այն ռարբիները, որոնք օրինադրեցին ներկայումս յարգել ոչ—հրէի և հրէուհու ամուսնական կապը, ենթադրումէին, թէ այդ ոչ—հրէան կարող է սերուած լինիլ անհետացած տասն ցեղից, Բացի դորանից ենթադրումն թէ ամենափերջին տեղափոխութեանց ժամանակ գոնէ նոցա մի մասը միացաւ իւր եղբայրների հետ: Յայտնի է, որ Պաղեստինում բնակուող անհատները, ինչպէս և ուրիշ կողմերում եղածները կարող էին իրանց ծագումը նոցանից առնել *), Ի վերայ այսր ամենայնի տասն ցեղերի ամենանշանաւոր մեծամասնութիւնը ինչպէս Քրիստոսի ժամանակ, նոյնպէս և մեր օրերում երրայական ազգի համար կորած պէտք է համարել:

(ԿԸՀ—Բ—Դ—Է)

Մեսրոպ Քաչ. Գեօնչեան.

(*) Ղուկ. Բ. 36. «Եւ անդ էր Աննա մարգարէ, դուստր Փանուէլի յազգէ Ասերայ. . . »